



A joint initiative of the OECD and the EU,
principally financed by the EU

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.

ՇՐՋԱՆԱԿ ԵՅՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հրատարակումը լիազորված է հիմնականում եՄ կողմից ֆինանսավորվող, ՏՀԶԿ և եՄ համատեղ նախաձեռնություն հանդիսացող SIGMA ծրագրի ղեկավար Քարեն Հիլլի կողմից: Սույն փաստաթուղթը պատրաստվել է եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Այն չպետք է ներկայացվի որպես եվրոպական Միության, ՏՀԶԿ կամ իր անդամ երկրների, ինչպես նաև SIGMA ծրագրում մասնակցող շահառու երկրների պաշտոնական կարծիք պարունակող փաստաթուղթ: Արտահայտված կարծիքներն ու ներկայացված փաստարկները հեղինակներին են:

Սույն փաստաթուղթը և նրանում ներառված քարտեզը կասկածի տակ չեն դնում որևէ տարածքի կարգավիճակը կամ ինքնիշխանությունը, միջազգային սահմանները և տարածքի, քաղաքի կամ գոտու անվանումը:

Քանի որ SIGMA ծրագիրը Տևտեսական Համագործակցության և Չարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) մաս է կազմում, վերջինիս հրատարակությունների օգտագործման համար նախատեսված պայմանները կիրառելի են նաև SIGMA-ի հրատարակությունների համար: <http://www.oecd.org/termsandconditions>

Բովանդակություն

Ներածություն	2
1. Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարական շրջանակը	7
2. Քաղաքականության մշակումը և համակարգումը	10
3. Հանրային ծառայությունն ու մարդկային ռեսուրսների կառավարումը	15
4. Հաշվետվողականությունը	18
5. Ծառայությունների մատուցումը	21
6. Հանրային ֆինանսների կառավարումը	24
Կարդալ ավելին՝ <i>Հանրային կառավարման սկզբունքները. շրջանակ ԵՀՔ երկրների համար:</i>	29

Ներածություն

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ

Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ) գործում է 2004թ-ից և նպատակաուղղված է Եվրոպական Միության (ԵՄ) սահմաններին ամենամոտ երկրներում կայունությանը, անվտանգությանը, բարեկեցությանը և համընդգրկուն տնտեսական զարգացմանն օժանդակելուն և խթանելուն: ԵՀՔ-ի միջոցով ԵՄ-ն աշխատում է իր հարավային¹ և արևելյան² հարևանների հետ՝ ավելի սերտ քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման ավելի բարձր մակարդակի հասնելու, ընդհանուր շահերը և սկզբունքները՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և սոցիալական համախմբումն ապահովելու համար:

2015թ. նոյեմբերին³ Եվրոպական հանձնաժողովի կողմից ԵՀՔ-ի վերանայման արդյունքում սահմանվեց նոր մոտեցում այն հարցի վերաբերյալ, թե ինչպես ԵՄ-ն ու իր հարևանները կարող են կառուցել առավել արդյունավետ

գործընկերություն՝ հիմնված տարբերակման և ավելի մեծ փոխադարձ պարտավորությունների վրա: Նոր ԵՀՔ-ն ընդունում է, որ ոչ բոլոր գործընկերներն են հետամուտ ԵՄ կանոններն ու չափանիշները ներդնելուն և արտացոլում է յուրաքանչյուր երկրի ցանկությունները ԵՄ հետ իրենց գործընկերության բնույթի և հիմնական ոլորտների վերաբերյալ:

ԵՀՔ վերանայման վերաբերյալ կարծիքների փոխանակման արդյունքում ընդգծվեց, որ և՛ կենտրոնական, և՛ տեղական մակարդակում հաշվետու հանրային կառավարում ունենալն առանցքային նշանակություն ունի ժողովրդավարական կառավարման, ինչպես նաև համընդգրկուն տնտեսական զարգացման համար: Դրան հասնելու համար հանրային կառավարման բարեփոխումները (ՀԿԲ) պետք է ընդգրկեն ժողովրդավարական և անկախ հաստատությունների ամրապնդումը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների զարգացումը, քաղաքացիական ծառայության ապաքաղաքականացումը, էլ-կառավարման համակարգի մշակումը և ինստիտուցիոնալ թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը: ԵՄ-ն առաջարկում է նաև ամրապնդել գործընկերների կարողությունները քաղաքականության մշակման, ծառայությունների մատուցման և հանրային ֆինանսների կառավարման

¹ Ալժիր, Եգիպտոս, Իսրայել, Լիբանան, Մարոկկո, Պաղեստինի Բնքնավարություն*, Սիրիա և Թունիս:

* [Նշումը կատարվել է Եվրոպական արտաքին ծառայության և Եվրոպական հանձնաժողովի կողմից. սա չպետք է ընդունվի որպես Պաղեստին պետության ճանաչում և չի բացառում Եվրոպական Միության անդամ պետությունների անհատական դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ]:

² Հայաստան, Ադրբեջան Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա:

³ Եվրոպական հանձնաժողով և Միության հատուկ հանձնակատար (2015թ.), *Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայում*

ուրտներում, ինչպես նաև օժանդակել ազգային խորհրդարանների զարգացմանը:

Հավելտու հանրային կառավարումը որպես ժողովրդավարական կառավարման և տնտեսական զարգացման առանցքային գործոն ճանաչելը համահունչ է վերջերս մշակված՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների հետ:⁴ Նպատակ 16-ն անդրադառնում է խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը խթանելուն, արդարությունը բոլորի համար հասանելի դարձնելուն և բոլոր մակարդակներում արդյունավետ, հաշվետու հաստատություններ ստեղծելուն: Ավելին, նպատակ 8-ն անդրադառնում է համընդգրկուն և կայուն տնտեսական զարգացումը, զբաղվածությունը և բոլորի համար արժանապատիվ աշխատանքը խթանելուն:

Արդյունավետ գործառնող հանրային կառավարումն առավելություններ ունի և՛ անհատների, և՛ պետության համար: Առաջին, դա կառավարությանը հնարավորություն է տալիս հասնել իր քաղաքական կուրսով սահմանված նպատակներին և ապահովում է քաղաքական որոշումների և իրավական կարգավորումների պատշաճ իրականացումը, և, հետևաբար, խթանում է քաղաքական արդյունավետությունը և կայունությունը: Ընդհակառակը, անարդյունավետ հանրային կառավարումն առաջացնում է ձգձգումներ, անարդյունավետություն, անորոշություն, կոռուպցիա և վատ կառավարման այլ դրսևորումներ, ինչը հանգեցնում է քաղաքացիների դժգոհությանը, հիասթափությանը, դիմադրությանը և պետության ու դրա ինստիտուտների հանդեպ բողոքին: Մա խաթարում է

⁴ Միավորված ազգերի կազմակերպություն (2015թ.) [Կայուն զարգացման նպատակներ](#):

կառավարության լեգիտիմությունը և կարող է հանգեցնել ձախողված պետության առաջացմանը:

Երկրորդ,⁵ հանրային կառավարման կարևորությունը տնտեսության զարգացման համար միջազգայնորեն ճանաչված է: Համապատասխան օրենսդրության և անկախ, արդյունավետ գործառնող դատական համակարգի հետ մեկտեղ, արդյունավետ հանրային կառավարումը շուկայի գործառնության հիմքն է: Ներդրողները շիսկը գնահատում են վարչական որոշումների կանխատեսելիության հիմնական չափորոշչի վրա հիմնվելով, ինչը կախված է քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրի կայունությունից: Ոչ արդյունավետ կառավարումը, որը դրսևորվում է վարչաբարական թերացումներով և երկարատև ու անհիմն բարդացված վարչական գործընթացներով, խոչընդոտում է տեղացի և արտասահմանյան պոտենցիալ ներդրողների տնտեսական նախաձեռնությունները՝ բացասական ազդեցություն ունենալով զբաղվածության և քաղաքական կայունության վրա:

⁵ S294 (2015թ.) [Government at a Glance, S294 Հրատակություն: Նաև, Տնտեսական և սոցիալական հարցերի Միացյալ ազգերի վարչության 2015թ. Համաշխարհային հանրային հատվածի զեկուլոյ:](#)

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀԿԲ-ն հիմնված է արդյունավետ կառավարման միջազգայնորեն ճանաչված այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են հաշվետվողականությունը, վստահելիությունը, կանխատեսելիությունը, մասնակցությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը և էֆֆեկտիվությունը: Արդյունավետ կառավարման այս համընդհանուր սկզբունքները ցույց են տալիս, որ արդյունավետ գործառնող վարչարարությունն ունի մի շարք չափումներ՝ քաղաքացիական ծառայության կազմակերպումը և ղեկավարումը, քաղաքականության մշակման և համակարգման կառույցներն ու ընթացակարգերը, հաշվետվողականության մեխանիզմները և՛ մարմինների միջև, և՛ քաղաքացիների առջև, անհատներին և ձեռնարկատիրություններին արդյունավետ ծառայություններ մատուցելու ունակությունը և հանրային ֆինանսների կառավարման ընդհանուր համակարգը:

Այդ պատճառով ԵՀ-ն տվել է հանրային կառավարման բազմակողմանի սահմանումը, որը ներառում է վեց առանցքային ոլորտ՝

1. Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարական շրջանակը,
2. Քաղաքականության մշակումը և համակարգումը,
3. Հանրային ծառայությունների և մարդկային ռեսուրսների կառավարումը,
4. Հաշվետվողականությունը,
5. Ծառայությունների մատուցումը,
6. Հանրային ֆինանսների կառավարումը:

ՄԻԳՄԱ-ն ԵՀ-ի հետ սերտ համագործակցությամբ մանրամասն սահմանել է այս վեց առանցքային ոլորտներից յուրաքանչյուրը «Հանրային կառավարման սկզբունքները. շրջանակ ԵՀՔ երկրների համար» փաստաթղթում: Այս սկզբունքները նպատակ ունեն օժանդակելու ազգային իշխանություններին, ԵՀ ծառայություններին և այլ դոնորներին հասնել ընդհանուր ըմբռնման այն մասին, թե ինչ է ներառում հանրային կառավարման բարեփոխումը և ինչ նպատակներ երկրները կարող են ունենալ իրենց վարչական բարեփոխումների ժամանակ. դա կարող է իրականացվել թե՛ ՀԿԲ համակողմանի ծրագրերի, թե՛ ՀԿ առանցքային ոլորտներից մեկի բարեփոխման միջոցով: Սկզբունքները կիրառելի են նաև այն երկրների համար, որտեղ համակողմանի բարեփոխումները դեռևս իրագործելի չեն, սակայն ՀԿԲ որոշակի ասպեկտներ կարող են իրականացվել ոլորտային ծրագրերի միջոցով:

Սկզբունքները մշակվել են առաջին հերթին քաղաքականություն մշակողների, որոշում կայացնողների և հանրային կառավարման ոլորտում բարեփոխումներ մշակող և իրականացնող այլ անձանց համար: Տարբեր երկրների կարիքներին հարմարեցված լինելով՝ դրանք պետք է դառնան ոգեշնչման օգտակար աղբյուր այն երկրների համար, որոնք ցանկանում են հարմարեցնել իրենց վարչական միջավայրը քաղաքացիների և տնտեսության նոր կարիքներին և համապատասխանեցնել կառավարման պրակտիկան արդյունավետ կառավարման միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին և պրակտիկային: Դրանք պետք է օգտակար լինեն նաև

միջազգային դոնորներին՝ մշակելու ազգային վարչակազմերի կարողությունների ամրապնդմանն ուղղված ծրագրեր:

Սկզբունքները վերաբերում են հանրային սեկտորի այն ոլորտներին, որոնք հայտնի են որպես «պետական կառավարում», որի երկու հիմնական տարրերն են «հանրային կառավարումը» և «պետական (ազգային կամ կենտրոնական) մակարդակը»: Սկզբունքները վերաբերում են նաև անկախ սահմանադրական մարմիններին, խորհրդարանին և դատական համակարգին (պետական կառավարման նկատմամբ վերահսկողության մասով): Նմանապես, սկզբունքներից շատերը կիրառելի են նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակում:

Սկզբունքները ներառում են 12 առանցքային պահանջ և 38 սկզբունք, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթասկզբունքների: Դրանք ուղեկցվում են մեթոդաբանական հավելվածով: Հավելվածը մեթոդաբանական գործիք է, որն օգնում է շահագրգիռ երկրներին գնահատել իրենց երկրի ներկա իրավիճակը՝ հանրային կառավարման որոշ կամ բոլոր սկզբունքների հետ համեմատությամբ, ինչպես նաև ժամանակի ընթացքում գնահատել առաջընթացը բարեփոխումների իրականացման գործում: Մեթոդաբանական գործիքը կարող է օգտագործվել արտաքին փորձագետների աջակցությամբ կամ ինքնագնահատում իրականացնելու համար: Ինչպես էլ գործիքն օգտագործվի, անհրաժեշտ է հավաքագրել զգալի չափի տվյալներ և ունենալ ուժեղ վերլուծական կարողություններ բազմակողմանի գնահատում

իրականացնելու նպատակով՝ ճշգրիտ և վստահելի արդյունքների հասնելու համար:

Մեթոդաբանական գործիքը ներառում է ն՝ որակական, և՛ քանակական ցուցիչներ ու կենտրոնանում է բարեփոխումների իրականացման և վարչակազմի կատարողականի որակի վրա: Երբ տեղին է, այն օգտագործում է միջազգայնորեն ճանաչված այլ ցուցիչներ, օրինակ՝ ցուցիչներ Համաշխարհային տնտեսական ֆորումից և Համաշխարհային բանկից: Ցուցիչները հնարավորություն են տալիս գնահատել առաջընթացը, ինչպես նաև տեղեկատվություն են տալիս այն քայլերի մասին, որոնք տվյալ երկիրը կարող են ձեռնարկել հանրային կառավարումն ավելի զարգացնելու և բարելավելու համար: Հանրային կառավարման սկզբունքների նման մեթոդաբանական գործիքը նույնպես ճկուն է. երկիրը կարող է որոշել օգտագործել բոլոր ցուցիչները կամ դրանցից որոշներն իր ներկա իրավիճակը գնահատելու համար: Քանի որ շրջանակը հնարավորություն է տալիս վերլուծել և հետևել առաջընթացին խիստ որոշակի ոլորտներում, հանրային կառավարման տարբեր ոլորտների հետ առնչվող հաստատությունները կարող են վերլուծել իրենց պատասխանատվության ոլորտ(ներ)ում կիրառելի ցուցիչները:

Մկզբունքները վերաբերում են կառավարման համակարգի առանցքային հորիզոնական շերտերին, որոնցով պայմանավորված է հանրային կառավարման ընդհանուր կատարողականը

1	Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարական շրջանակ
2	Քաղաքականության մշակում և համակարգում
3	Հանրային ծառայություն և մարդկային ռեսուրսների կառավարում
4	Հաշվետվողականություն
5	Ծառայությունների մատուցում
6	Հանրային ֆինանսների կառավարում

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Արդյունավետ հանրային կառավարում ստեղծելու համար անհրաժեշտ են բարեփոխումներ քաղաքականության բազմաթիվ, տարաբնույթ ոլորտներում և շատ կազմակերպություններում: Ad hoc (լատ.՝ տվյալ դեպքի համար) հիմքով, որոշակի ոլորտներով սահմանափակված բարեփոխումների պլանավորումն ու իրականացումը չեն կարող սպասվածի չափով բարձրացնել հանրային կառավարման գործառնության արդյունավետությունը: Արդյունքների հասնելու համար կառավարությունը պետք է ուղղորդի և համակարգի բարեփոխումների ընդհանուր տեսլականի և առաջնահերթ նպատակների իրականացումը: Այդ պատճառով էլ կարևոր է հետևողականորեն մոտենալ հանրային կառավարման բարեփոխումներին և մշակել ամբողջ կառավարության համար նախատեսված բարեփոխումների օրակարգ:

Ցանկացած երկրում ՀԿԲ-ն հորիզոնական բարեփոխումների ամենակարևոր ոլորտներից է, քանի որ այն շրջանակ է տալիս և նախապայմաններ է ստեղծում քաղաքականության այլ նպատակների իրականացման համար: Օրինակ, լավ

գործառնող վարչարարությունը երկրներին հնարավորություն է տալիս արդյունքների հասնել շատ ոլորտներում, ներառյալ կրթությունը և ներքին անվտանգությունը: Երկրները զարգանում են տարբեր արագությամբ և տարբեր մոտեցումներ ունեն հանրային կառավարման բարեփոխումների իրականացման և կառավարման վերաբերյալ: Այնուամենայնիվ, «Հանրային կառավարման սկզբունքները, շրջանակ ԵՀՔ երկրների համար» փաստաթուղթը սահմանում է արդյունավետ հանրային կառավարման հիմնական անկյունաքարերը և կիրառելի է բոլոր երկրներում:

Բարեփոխումների արդյունավետ և հստակ կառավարումը, իրականացման լավ գործառնող մեխանիզմները, հաշվետվողականության հստակ բաշխումը և բարեփոխումների ֆինանսական կայունությունը ՀԿԲ արդյունավետ ռազմավարության հիմնաքարերն են: Դրանք առանցքային նշանակություն ունեն ռազմավարության գործնական իրականացումը երաշխավորելու համար, որպեսզի այն միայն թղթի վրա չմնա:

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՄԿԶԲՈՒՆՔ 1	Ձևավորվել է հանրային կառավարման բարեփոխումների արդյունավետ օրակարգ, որն անդրադառնում է առանցքային մարտահրավերներին և համակարգված ձևով իրականացվում և մշտադիտարկվում է:
ՄԿԶԲՈՒՆՔ 2	Երաշխավորվում է հանրային կառավարման բարեփոխումների ֆինանսական կայունությունը:
ՄԿԶԲՈՒՆՔ 3	Հանրային կառավարման բարեփոխումների գործընթացում ներգրավված հաստատությունները հստակ պատասխանատվություն են կրում բարեփոխումների նախաձեռնությունների համար և ունեն դրանք իրականացնելու կարողություն:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՇՐՋԱՆԱԿ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- ՀԿԲ նպատակները և առաջնահերթությունները միատեսակ և կոհերենտ ձևով սահմանող կենտրոնական պլանավորման փաստաթղթերի հարաբերական թիվը:
- ՀԿԲ իրականացված նպատակների տոկոսը:
- Ֆինանսավորված ՀԿԲ միջոցառումների մասնաբաժինը:

ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- ՀԿԲ կենտրոնական պլանավորման փաստաթղթ(եր)ի շրջանակի ամբողջականության աստիճանը :
- ՀԿԲ զեկուցման ու մշտադիտարկման համապարփակ համակարգի լիարժեք գործառնության աստիճանը:
- ՀԿԲ գործառնությունների համար հաշվետվողականության սահմանված լինելու աստիճանը:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Քաղաքական կուրսը և օրենսդրությունը քաղաքական ղեկավարման և վարչարարության առանցքային արդյունքներն են: Յուրաքանչյուր երկրում քաղաքական ղեկավարությունը կառավարող սահմանադրական շրջանակը տարբեր է և կարող է ընդգրկել միապետի, նախագահի, վարչապետի և նախարարների խորհրդի տարբեր համադրություններ: Բոլոր դեպքերում շատ կարևոր է, որ քաղաքական որոշումներն ընդունվեն համակարգված ձևով՝ ապահովելով, որ արդյունքը հաստատուն, կանխատեսելի և համահունչ լինի պետության ռազմավարական նպատակներին և ռեսուրսներին: Այդ պատճառով քաղաքական ղեկավարությունը քաղաքականության մշակման և որոշումների կայացման համակարգերին օժանդակող վարչական հաստատությունների կարիք ունի: Քաղաքականության մշակումը և համակարգումը պետք է ամրապնդվեն քաղաքականության պլանավորման, մշակման, համակարգման, իրականացման և մշտադիտարկման այնպիսի կարգավորումներով և կարողություններով, որոնք՝

- Ստեղծում են քաղաքականության մշակման շրջանակ, որը կօգնի ապահովել առանձին քաղաքականությունների համապատասխանությունը ազգային նպատակներին և առաջնահերթություններին,
- Տալիս են քաղաքականության և օրենսդրական արտադրանքի նախնական պլանավորման անհրաժեշտ կարողություններ և ընթացակարգեր,
- Տալիս են վերահսկողության և համակարգման ինստիտուցիոնալ կարողություններ՝ քաղաքականության տարբեր ուղղությունների միջև հորիզոնական համապատասխանությունն ապահովելու համար,
- Որոշում կայացնողներին այնպիսի խորհրդատվություն են տալիս, որը հիմնված է հստակ սահմանումների, ապացույցների և հիմնախնդիրների խորը վերլուծության վրա, և որը պարունակում է հնարավոր անհամապատասխանությունների և հակասությունների վերաբերյալ հստակ ցուցումներ,
- Պարունակում են խորհրդակցական մեխանիզմներ՝ քաղաքական կուրսի վերաբերյալ կոնֆլիկտները գործընթացի սկզբում կանխատեսելու, հայտնաբերելու և լուծելու ու կոհերենսությունը բարելավելու համար,
- Պարունակում են քաղաքական կուրսի առաջնահերթությունների և բյուջետային հրամայականների արդյունավետ համաձայնեցման ընթացակարգեր,
- Պարունակում են մշտադիտարկման մեխանիզմներ՝ պրոգրեսի, նոր տեղեկատվությանը և փոփոխվող հանգամանքներին քաղաքական կուրսի հարմարվելու կարողությունը ապահովելու համար:

Ընդհանուր առմամբ, քաղաքականության մշակման համակարգը պետք է լինի լավ կազմակերպվածն գործառնի համարժեք ձևով: Կենտրոնական⁶ ինստիտուցիոնալ կառուցվածքը պետք է ընդգրկի կենտրոնական կառավարությունը և հորիզոնական պարտականություններ ունեցող այլ մարմիններ, ինչպիսիք են ֆինանսների նախարարությունը և քաղաքականության պլանավորման համար պատասխանատու մարմինը:

⁶ Կենտրոնական կառավարություն (ԿԿ) եզրույթը վերաբերում է այն վարչական կառույցին, որը ծառայում է գործադիրին (միապետ, նախագահ կամ վարչապետ և նախարարների խորհուրդ՝ միասին վերցված): ԿԿ տարբեր երկրներում տարբեր անուններ ունի, ինչպիսիք են գլխավոր քարտուղարություն, նախարարների խորհուրդ, կանցելարիա, նախագահության գրասենյակ/նախարարություն, նախարարների խորհրդի գրասենյակ: Շատ երկրներում ԿԿ կազմված է մեկից ավել միավորից՝ այս գործառնություններն իրականացնելու համար: ԿԿ ավելի մանրամասն նկարագրության համար տե՛ս, ՏՀԶԿ (2015թ.), [Government at a Glance 2015](#), ՏՀԶԿ հրատարակչություն, Փարիզ, էջ. 92:

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՄԿԶԲՈՒՆՔ 1	Քաղաքականության միջնաժամկետ պլանավորումը համաձայնեցված է կայուն, համակարգային նպատակներին և համապատասխանում է պետության ֆինանսական իրավիճակին: Ոլորտային քաղաքականությունները համընկնում են ղեկավարության կողմից սահմանված ընդհանուր նպատակներին և համապատասխանում են միջնաժամկետ բյուջետային ծրագրին:
ՄԿԶԲՈՒՆՔ 2	Կատարողականի պարբերական մշտադիտարկումը հրապարակային վերահսկողություն իրականացնելու հնարավորություն է ընձեռում և ապահովում է սահմանված նպատակների իրականացումը:
ՄԿԶԲՈՒՆՔ 3	Քաղաքականության մշակման ոլորտի և օրենսդրական որոշումներն ընդունվում են թափանցիկ ձևով և հիմնված են վարչակազմի մասնագիտական դատողությունների վրա:
ՄԿԶԲՈՒՆՔ 4	Խորհրդարանը վերահսկում է կառավարության կողմից վարվող քաղաքականությունը:
ՄԿԶԲՈՒՆՔ 5	Պատասխանատու պետական մարմինների կազմակերպչական կառուցվածքը, ընթացակարգերը և անձնակազմի տեղաբաշխումը երաշխավորում են կիսամյակային և տարեկան նպատակներին և ծրագրերին համապատասխանող քաղաքական կուրսի և օրենսդրության մշակման և իրականացման կարողությունը:
ՄԿԶԲՈՒՆՔ 6	Քաղաքականության մշակման և օրենսդրության նախագծման գործընթացը ապացուցահեն է, իսկ նախարարություններում պարբերաբար իրականացվում է ազդեցության գնահատում:

<p>ՄԿԶԲՈՒՆՔ 7</p>	<p>Քաղաքականությունը և օրենսդրությունը մշակվում են համընդգրկուն ձևով, ինչը հնարավոր է դարձնում հասարակության ակտիվ մասնակցությունը և վարչարարության ներսում համակարգման հեռանկարները:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 8</p>	<p>Օրենսդրության կառուցվածքը, ոճը և լեզուն ներդաշնակեցված են: Իրավաստեղծ պահանջները հետևողականորեն կիրառվում են բոլոր նախարարություններում: Օրենսդրությունը հասանելի է հանրությանը:</p>

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՇՐՋԱՆԱԿ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Ընդունումից հետո մեկ տարվա ընթացքում փոփոխությունների ենթարկված նոր օրենքների հարաբերական թիվը:
- Կենտրոնական պլանավորման փաստաթղթ(եր)ում նախատեսված հանձնառությունների իրագործման ամենամյա պարտավորությունը:
- Ոլորտային ռազմավարությունների մշակման տարեկան պարտավորությունը:
- Նախարարությունների կողմից նախարարների խորհրդի (կամ համարժեք մարմնի) նստաշրջան ժամանակին ներկայացրած պարբերական օրակարգային հարցերի հարաբերական թիվը:

ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Քաղաքանության մշակման գործընթացում վերլուծական գործիքների հնարավորինս արդյունավետ կիրառման աստիճանը:
- Քաղաքանության և օրենսդրության մշակման ընթացքում հանրային քննարկումների կիրառման աստիճանը:
- Առաջնային և երկրորդային օրենսդրության կենտրոնացված ձևով հրապարակման աստիճանը :
- Ոլորտային ռազմավարություններում ֆինանսական հաշվարկների ամբողջականությունը:
- Հաշվետվությունների միջոցով՝ արձանագրած արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աստիճանը:

3. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հանրային ծառայությունը հանրային կառավարման առանցքային բաղկացուցիչներից է: Լավ մշակված և արդյունավետ գործառնող հանրային ծառայությունը պետությանը հնարավորություն է տալիս հասնել պրոֆեսիոնալիզմի և հանրային ծառայությունների կայունության ու որակի համարժեք մակարդակի վարչարարության բոլոր ոլորտներում: Սա հանգեցնում է ավելի արդյունավետ քաղաքականության մշակման և քաղաքացիներին ու ձեռնարկատիրություններին ավելի որակյալ ծառայությունների մատուցման: Ժամանակակից հանրային ծառայությունը հնարավոր է միայն մի շարք նախապայմանների առկայության դեպքում, որոնք երաշխավորում են՝

- Հանրային և մասնավոր ոլորտների տարանջատումը,
- Քաղաքականության և վարչարարության տարանջատումը,
- Հանրային ծառայողների անհատական հաշվետվողականությունը,
- Հանրային ծառայողների համար աշխատանքային պաշտպանվածության, վարձատրության և կայունության բավարար մակարդակը և հստակ սահմանված իրավունքները և պարտականությունները,
- Արժանիքահեն համարումը և առաջխաղացումը:⁷

Հանրային ծառայության շրջանակի վերաբերյալ կարող են լինել տարբեր մոտեցումներ: Հանրային ծառայության լայն հայեցակարգ կիրառող երկրներում այն կարող է ներառել յուրաքանչյուր հանրային աշխատողի, մինչդեռ սահմանափակ շրջանակով երկրներում հանրային ծառայությունն ընդգրկում է միայն այսպես կոչված «հանրային կառավարման միջուկը», այսինքն՝ նախարարությունները, արտաքին ծառայությունը, նաև խորհրդարանի, նախագահի և սահմանադրական, անկախ մարմինների վարչակազմը: Այս փաստաթղթում ՄԻԳՄԱ-ն կիրառում է հանրային ծառայության նեղ շրջանակը, որը շատ երկրներում անվանվում է քաղաքացիական ծառայություն: ՄԻԳՄԱ-ի սկզբունքները նախատեսված չեն, օրինակ, տեղական ինքնակառավարման համար, չնայած դրանց մեծամասնությունը կիրառելի է նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում:

Անկախ կիրառվող շրջանակից՝ հանրային ծառայությունում հանրային շահը պետք է գերակշռի մասնավոր շահերին: Պետք է լինի վարչական աշխատակիցների մի շերտ՝ պրոֆեսիոնալ քաղաքացիական ծառայողներ, որոնք աշխատանքի են ընդունվում արժանիքի հիման վրա և իրականացնում են պետական քաղաքականության մշակման և իրականացման գործառնողը. դա պետք է կատարվի քաղաքական գործիչների ղեկավարությամբ, սակայն առանց նրանց կողմից անտեղի միջամտության:

⁷ ՄԻԳՄԱ (1999թ.), [Հանրային կառավարման եվրոպական սկզբունքներ](#), ՄԻԳՄԱ-ի փաստաթղթեր, No. 27, ՏՀԶԿ հրատարակչություն, Փարիզ

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

<p>ՄԿԶԲՈՒՆՔ 1</p>	<p>Առկա են պրոֆեսիոնալ և կոհերենտ հանրային ծառայություն ունենալու համար անհրաժեշտ քաղաքականությունն ու իրավական շրջանակը: Ինստիտուցիոնալ կառուցակարգերը հնարավորություն են ընձեռում իրականացնել մարդկային ռեսուրսների հետևողական և արդյունավետ կառավարում հանրային ծառայության ողջ համակարգում:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 2</p>	<p>Հանրային ծառայության շրջանակը հստակ սահմանված և ադեկվատ է:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 3</p>	<p>Հանրային ծառայողների, այդ թվում ավագ դեկավար պաշտոն զբաղեցնողների համալրումը հիմնված է արժանիքների և հավասարության սկզբունքի վրա համալրման գործընթացի բոլոր փուլերում: Պաշտոնի իջեցման և աշխատանքից հեռացնելու չափորոշիչները հստակ սահմանված են օրենքով և սահմանափակում են հայեցողությունը:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 4</p>	<p>Հանրային ծառայողների վարձատրության համակարգը հիմնված է պաշտոնների դասակարգման վրա. այն արդար է և թափանցիկ:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 5</p>	<p>Երաշխավորված է հանրային ծառայողների մասնագիտական զարգացումը. այն ներառում է պարբերական վերապատրաստումը, կատարողականի արդար գնահատումը, ինչպես նաև օբյեկտիվ ու թափանցիկ չափանիշների և արժանիքների վրա հիմնված շարժունությունը և առաջխաղացումը:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 6</p>	<p>Առկա են հանրային ծառայության համակարգում բարեվարքությունը խթանող, կոռուպցիան կանխարգելող և կարգապահությունը երաշխավորող կարգավորումներ:</p>

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՇՐՋԱՆԱԿ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Կենտրոնական վարչարարության մակարդակում քաղաքացիական ծառայողների ամենամյա հոսունությունը:
- Կենտրոնական վարչարարության մակարդակում թափուր պաշտոնների համար թեկնածուների միջին թիվը :
- Կենտրոնական վարչարարության մակարդակում քաղաքացիական ծառայության ավագ դեկավար պաշտոն զբաղեցնող կանանց տոկոսը:
- Քաղաքացիների ընկալումները հանրային ծառայության բարեվարքության և վստահելիության վերաբերյալ:

ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Հանրային ծառայության շրջանակի ադեկվատության, հստակ սահմանված լինելու և գործնական կիրառման աստիճանը:
- Գործընթացի բոլոր փուլերում հանրային ծառայողներին արժանիքի սկզբունքի հիման վրա համալրելու աստիճանը:
- Հանրային ծառայողների վարձատրության համակարգի արդարության և թափանցիկության աստիճանը :
- Հանրային ծառայությունում բարեվարքության համակարգի առկայության և գործնական կիրառման աստիճանը:

4. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լայն ճանաչում ունի այն մոտեցումը, որ հանրային ծառայության կառուցվածքը մեծ ազդեցություն ունի դրա ընդհանուր կատարողականի և, հետևաբար, քաղաքացիների սպասումների հետ կապված դրա ժողովրդավարական լեգիտիմության վրա: Արդյունավետության որոնում, հետագա մասնագիտացման կարիք, սահմանդրական և իրավական համատեքստ ու վարչական ավանդույթ, վերահսկողության համակարգերի առկայություն և քաղաքական իրավիճակ. սրանք բոլորը գործոններ են, որ ազդում են տվյալ երկրի կողմից կազմակերպական մոդելի ընտրության վրա: Որպես հետևանք՝ չկա տարբեր երկրների հանրային ծառայության կառուցվածքը և գործառնությունը բացատրող մեկ միասնական մոդել:

Այնուամենայնիվ, հաշվետվողականության (ներառյալ կազմակերպական հաշվետվողականության) հետ կապված՝ առկա են որոշ նախապայմաններ, որոնք համարվում են անհրաժեշտ հանրային կառավարման գործառնությունների պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու համար՝

- Ռացիոնալություն՝ արդյունավետության և կոհերենտության ապահովում, հանրային մարմինների գործառնությունների համընկնումից խուսափում, վերահսկողության հավասարակշռված համակարգի հաստատում,
- Թափանցիկություն՝ ընդունված ընդհանուր տեսակներին համապատասխանող հստակ և կոհերենտ կառուցվածքի ապահովում,
- Ֆինանսական իրագործելիություն՝ չափի և ծախսերի համապատասխանեցում երկրի կարիքներին,
- Հաշվետվողականություն՝ ապահովել, որ կառույցի յուրաքանչյուր մաս ունենա ներքին հաշվետվողականություն, իսկ մարմինը՝ որպես ամբողջություն, արտաքնապես հաշվետու լինի քաղաքական, դատական և սոցիալական համակարգերին ու վերահսկողության մարմիններին, ինչպես նաև հանրամատչելի տեղեկատվության հասանելիության ապահովում:

Հաշվետու մարմինները պատասխանատու են նաև իրենց աշխատակիցների որոշումների և գործողությունների համար ու պետք է արդար լուծում տան նրանց կողմից պարտականությունների միտումնավոր խախտման դեպքում:

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՄԿԶԲՈՒՆՔ 1	Կենտրոնական կառավարության ընդհանուր կառուցվածքը ռացիոնալ է, հիմնված է ադեկվատ քաղաքականության և կանոնակարգումների վրա ու ապահովում է պատշաճ անկախ հաշվետվողականություն:
ՄԿԶԲՈՒՆՔ 2	Առկա են արդյունավետ վարչարարություն ունենալու անհատի իրավունքը, ինչպես նաև հանրային շահը պաշտպանելու գործուն մեխանիզմներ:
ՄԿԶԲՈՒՆՔ 3	Հանրային տեղեկատվության հասանելիության իրավունքն ամրագրված է օրենսդրությամբ և գործնականում հետևողականորեն կիրառվում է :
ՄԿԶԲՈՒՆՔ 4	Ներքին վարչական բողոքարկումները և դատական վերահսկողությունը երաշխավորում են վարչական վարույթներում անաչառ մոտեցումը :
ՄԿԶԲՈՒՆՔ 5	Հանրային իշխանությունները պատասխանատվություն են կրում հանրային ծառայողների կողմից կատարված իրավախախտումների համար և երաշխավորում դրանց շտկումը և/կամ համարժեք փոխհատուցումը:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՇՐՋԱՆԱԿ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Տվյալ տարվա ընթացքում պետական հիմնարկների կողմից հանրային տեղեկատվության տրամադրման դիմումների մերժման դեպքերի մասնաբաժինը:
- Փաստաթղթային ռեեստր և տվյալների բազա ունեցող պետական մարմինների մասնաբաժինը :
- Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ(ներ)ի նկատմամբ վստահություն ունեցող քաղաքացիների տոկոսը :
- Դատական համակարգի նկատմամբ վստահություն ունեցող քաղաքացիների տոկոսը:
- Վարչական գործերով սահմանված և չկատարված պարտավորությունների քանակը :

ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Նախարարությունների և կենտրոնական կառավարությանը ենթակա այլ մարմինների ընդհանուր կառուցվածքի ռացիոնալության և կոհերենտության աստիճանը:
- Հանրային տեղեկատվության հասանելիության/հանրամատչելիության իրավունքն օրենսդրությամբ ամրագրված լինելու և դրա գործնական կիրառման աստիճանը:
- Պետական կառույցների գործունեությունը զսպող և հավասարակշռող, ինչպես նաև վերահսկող արդյունավետ մեխանիզմների առկայության աստիճանը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

Արդյունավետ հանրային կառավարումը կայուն տնտեսական աճի, զարգացման և բարեկեցության խթանման էական բաղկացուցիչ է: Արդյունավետ կառավարումը կարող է մեծ ներդրում ունենալ տնտեսության արդիականացման, աշխատատեղերի ստեղծման և ներդրողների ներգրավման գործում: Վարչական ընթացակարգերի պարզեցումը հանգեցնում է տնտեսական զարգացման համար ավելի բարենպաստ միջավայրի, իսկ ծառայությունների մատուցման ժամանակակից մեթոդները, ինչպիսիք են էլ-կառավարման հետ կապված լուծումներն ու մեկ պատուհանի սկզբունքով գործող ծառայությունները, հանգեցնում են վարչական ընթացակարգերի բարելավմանը և, հետևաբար, անձանց և ձեռնարկությունների վրա դրվող բեռի թեթևացմանը:

Կարելի է առանձնացնել վարչական իրավունքի համար անհրաժեշտ հետևյալ հիմնական սկզբունքները՝

- Վստահելիություն և կանխատեսելիություն (իրավական որոշակիություն),
- Թափանցիկություն,
- Հաշվետվողականություն,
- Արդյունավետություն և էֆֆեկտիվություն⁸:

Շարունակելով թեման՝ կարելի է ավելացնել, որ «Հանրային կառավարման սկզբունքները. շրջանակ ԵՀՔ երկրների համար» փաստաթղթի նպատակն է կենտրոնանալ հանրային կառավարման կողմից ծառայությունների մատուցման, հատկապես արդյունավետության վրա՝ միաժամանակ ապահովելով քաղաքացիների և ձեռնարկությունների պաշտպանվածությունը վարչական ընթացակարգերի ժամանակ:

Ծառայությունների մատուցումը լայնորեն կարող է սահմանվել որպես հանրային կառավարման հետ բոլոր շփումները, որոնց ընթացքում հաճախորդները (քաղաքացիները, տեղաբնակները և ձեռնարկությունները) փնտրում են տվյալներ, զբաղվում են իրենց գործերով կամ սեփական կամքով ներգրավված են պետության հետ փոխգործակցային հարաբերությունների մեջ:

Այս համատեքստում հաճախորդների կարիքներին միտված լինելը պետք է ներառի բոլոր այն շփումները և հանրային կառավարման կողմից իրականացվող բոլոր այն գործառնությունները, որոնք ազդում են անհատների և ձեռնարկությունների վրա: Այս լայն սահմանումն ընդգրկում է ոչ միայն կենտրոնական հանրային կառավարման և հաճախորդների միջև շփումները, այլև այդ շփումները կարգավորող կանոնները, այսինքն՝ վարչական ընթացակարգերը:

⁸ ՄԻԳՄԱ (1999թ.), [Հանրային կառավարման էվրոպական սկզբունքներ](#), ՄԻԳՄԱ-ի փաստաթղթեր, No. 27, S294 հրատարակչություն, Փարիզ

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՄԿԶԲՈՒՆՔ 1	Առկա է և գործնականում կիրառվում է ծառայությունների մատուցման վրա կենտրոնացած պետական վարչարարության քաղաքականություն:
ՄԿԶԲՈՒՆՔ 2	Արդյունավետ վարչարարությունը հանրային ծառայությունների մատուցման քաղաքականության առանցքային նպատակներից է, ամրագրված է օրենսդրությամբ և հետևողականորեն կիրառվում է գործնականում:
ՄԿԶԲՈՒՆՔ 3	Առկա են հանրային ծառայության որակն ապահովող մեխանիզմներ:
ՄԿԶԲՈՒՆՔ 4	Հանրային ծառայությունների հասանելիությունը երաշխավորված է:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՇՐՋԱՆԱԿ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Ընդհանուր հանրային ծառայությունների վրա կատարված ծախսերն իբրև համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մաս:
- Հանրային ծառայությունների մատուցումից բավարարված օգտատերերի տոկոսը:
- Մատուցվող ծառայություններից բավարարվածության վերաբերյալ կանոնավոր (առնվազն երկու տարին մեկ անգամ) հարցումներ իրականացնող հաստատությունների մասնաբաժինը :

ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Ծառայությունների մատուցման քաղաքացիամետ քաղաքականության առկայության և կիրառման աստիճանը:
- Էլ-ծառայությունների մատուցման վարչական նախապայմանների և քաղաքականության կիրառման աստիճանը:
- Արդյունավետ կառավարման իրավական շրջանակի առկայության և դրա հետևողական կիրառման աստիճանը:

6. ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բյուջեն սահմանում է այն ֆինանսական շրջանակը, որին համապատասխան՝ կառավարությունը սահմանում է տնտեսական և սոցիալական քաղաքականության նպատակները՝ հանուն իր քաղաքացիների շահի: Ճիշտ որոշումներ կայացնելու և ծախսերի սահմանները պահպանելու նպատակով հանրային ֆինանսների կառավարման (ՀՖԿ) արդյունավետ համակարգերը էական նշանակություն ունեն բյուջետային շրջանի բոլոր տարրերի համար՝ սկսած ձևավորումից մինչև իրականացում՝ ներառյալ գնումները, վերահսկողությունը և աուդիտը:

Արդյունքներ ապահովելու վրա կենտրոնացած ՀՖԿ համակարգ ունենալու համար՝ բարեփոխումները պետք է իրականացվեն աստիճանաբար, յուրաքանչյուր երկրի յուրահատուկ իրավիճակին համապատասխան: Չկա բոլորի համար ընդունելի միատեսակ մոտեցում, սակայն ՀՖԿ արդյունավետ համակարգերը հիմնված են որոշակի հիմնարար սկզբունքների և գործելակերպի վրա:

Մսյն փաստաթուղթը կենտրոնանում է հիմնականում կենտրոնական կառավարման վրա: Տեղական ինքնակառավարման ֆինանսավորումը տեղի է ունենում պետական բյուջեի շրջանակում: Բացի ընդհանուր հանրային եկամուտները կանխատեսելուց, փաստաթուղթը կենտրոնանում է նաև ծախսերի կառավարման վրա: Շեշտադրումը պետության ՀՖԿ ընդհանուր համակարգի, ինչպես նաև հանրային կառույցների ներքին վերահսկողական կարգավորումների վրա է:

Հանրային գնումներն արդյունավետ ֆինանսական կառավարման անբաժանելի մասն են: Դրանց տնտեսական ազդեցությունը նշանակալի և մեծապես տեսանելի է: Բացի այդ, որպես մի ոլորտ, որտեղ սխալ ծախսերի, թույլ վերահսկողության և կոռուպցիայի ռիսկերը բարձր են, դրանք կարող են զգալի ազդեցություն ունենալ կառավարության նկատմամբ հանրության վստահության վրա:

Հանրային ֆինանսական հաշվետվողականության համակարգի համար անհրաժեշտ է գործադիրի կողմից հանրային ֆինանսների կառավարման նկատմամբ անկախ և մասնագիտական վերահսկողություն: Մրա համար անհրաժեշտ է սահմանադրությամբ հստակ ամրագրված և Գերագույն աուդիտորական հաստատությունների միջազգային կազմակերպության չափորոշիչների համաձայն արդյունավետ գործառնող գերագույն աուդիտորական հաստատության առկայություն:

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

<p>ՄԿԶԲՈՒՆՔ 1</p>	<p>Կառավարությունը հրապարակում է միջնաժամկետ բյուջետային ծրագիր, որը հիմնված է արժանահավատ կանխատեսումների վրա և ընդգրկում է առնվազն եռամյա ժամանակահատված. այն նախատեսված է բոլոր կառավարական մարմինների համար և բյուջետային բոլոր հիմնարկները գործում են դրա շրջանակում:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 2</p>	<p>Բյուջեն ձևավորվում է ազգային իրավական շրջանակին համապատասխան՝ ծախսերի համապարփակ հատկացումներով, որոնք համատեղելի են միջնաժամկետ բյուջետային ծրագրի հետ և վերահսկվում են:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 3</p>	<p>Բյուջետային հարցերի համար պատասխանատու կենտրոնական մարմինը կամ իրավասու կենտրոնական գանձապետական մարմինը կենտրոնացված ձևով վերահսկում է ֆինանսների տեղաբաշխումը գանձապետական հաշվեհամարից և երաշխավորում է փողի լիկվիդությունը:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 4</p>	<p>Առկա է պարտքերի կառավարման հստակ ռազմավարություն, որն այնպես է իրականացվում, որ ընդհանուր պետական պարտքի թիրախը պահպանվում է, իսկ պարտքի սպասարկման ծախսերն էլ վերահսկելի են լինում:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 5</p>	<p>Երաշխավորված է բյուջեի թափանցիկությունն ու վերահսկելիությունը:</p>

<p>ՄԿԶԲՈՒՆՔ 6</p>	<p>Ներքին վերահսկողության օպերացիոնալ շրջանակը սահմանում է պարտավորություններն և լիազորությունները և իրականացվում է բյուջետային մարմինների կողմից՝ ներքին վերահսկողության ընդհանուր քաղաքականությանը համապատասխան:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 7</p>	<p>Ներքին աուդիտի օպերացիոնալ շրջանակը համապատասխանում է միջազգային չափանիշներին և կանոնավոր կերպով կիրառվում է կառավարական հաստատությունների կողմից:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 8</p>	<p>Հանրային գնումների մասին կարգավորումները համապատասխանում են խնայողության, արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին, առկա են գնումների քաղաքականությունն արդյունավետ և էֆֆեկտիվ կերպով մշակելու, իրականացնելու և մշտադիտարկելու կենտրոնական ինստիտուցիոնալ և վարչական կարողություններ:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 9</p>	<p>Եկամուտների համակարգը համահունչ է կիրառելի համաձայնագրերին և միջազգային կարգավորումներին ու անկախության, անկաշառության և թափանցիկության միջազգայնորեն ճանաչված պրակտիկային և տալիս է բողոքների ու պատժամիջոցների հետ կապված հարցերի արագ և կոմպետենտ լուծման հնարավորություն:</p>
<p>ՄԿԶԲՈՒՆՔ 10</p>	<p>Հանրային գնումների հետ կապված գործընթացները համահունչ են հավասար վերաբերմունքի, խտրականության բացառման, համաչափության և թափանցիկության հիմնարար սկզբունքներին և ապահովում են հանրային միջոցների հնարավորինս արդյունավետ օգտագործումը, պայմանագրային հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ ու կիրառում են գնումների ժամանակակից միջոցներ:</p>

ՄԿՋԲՈՒՆՔ 11

Գերագույն աուդիտորական մարմնի անկախությունը, լիազորությունները և կառուցվածքը սահմանված և պաշտպանված են սահմանադրական և իրավական շրջանակներով և կիրառվում են գործնականում:

ՄԿՋԲՈՒՆՔ 12

Գերագույն աուդիտորական մարմինը չափորոշիչները կիրառում է չեզոք և օբյեկտիվ ձևով՝ բարձրորակ աուդիտ ապահովելու համար, ինչը դրական է ազդում հանրային ոլորտի կառավարման և գործառնության վրա:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՇՐՋԱՆԱԿ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Կառավարության բյուջեի ընդհանուր հաշվեկշիռը:
- Պետական պարտքը՝ որպես ՀՆԱ-ի մի մաս:
- Գնման վերաբերյալ հրապարակված հայտարարությունների համեմատ բողոքների թվաքանակը:
- Մրցակցային ընթացակարգերի միջոցով կնքված պայմանագրերի մասնաբաժինը:
- Պետական աուդիտորական հաստատությունների կողմից աուդիտի արդյունքում տված առաջարկությունների՝ աուդիտի ենթարկվողների կողմից ընդունման մասնաբաժինը:

ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Խորհրդարանին ներկայացվող ամենամյա ֆինանսական հաշվետվությունում ամբողջական տեղեկատվության առկայության աստիճանը:
- Ամենամյա ֆինանսական հաշվետվությունում ամբողջական տեղեկատվության տրամադրման և սահմանված ժամկետում այն խորհրդարանին ներկայացնելու աստիճանը :
- Ներքին աուդիտի հաշվետվությունների որակը:
- Հանրային գնումների օրենսդրության ամբողջականության և գործնական կիրառման աստիճանը:
- Պետական աուդիտորական հաստատությունների կողմից Գերագույն աուդիտորական հաստատությունների միջազգային չափանիշների կիրառման աստիճանը :

Կարդալ ավելին՝ *Հանրային կառավարման սկզբունքները. շրջանակ ԵՀՔ երկրների համար:*

Յուրաքանչյուր սկզբունքի շրջանակում մասնավորեցնող ենթասկզբունքները մատնանշված են «Հանրային կառավարման սկզբունքները. շրջանակ ԵՀՔ երկրների համար» փաստաթղթում, որը թվային տեսքով հասանելի է ՏՀԶԳ/ՄԻԳՄԱ կայքում՝ <http://www.sigmaweb.org/publications/principles-public-administration-european-neighbourhood-policy.htm>

Լրացուցիչ տեղեկությունների համար.

OECD/SIGMA
2 Rue André Pascal
75775 Paris Cedex 16
France

mailto: sigmaweb@oecd.org
Tel: +33 (0) 1 45 24 82 00

www.sigmaweb.org